ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ

ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«09» հունվարի 2017 թվականի № 01-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասը, ՀՀ էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի հուսալիության և անվտանգության չափանիշների պահպանման նպատակով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 24.11.2016թ. N115-Ա հրամանով հաստատված, էներգետիկայի պետական տեսչության (ԷՊՏ) 2017 թվականի տեխնիկական ստուգումների տարեկան աշխատանքային ծրագիրը

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

1. 2017 թվականի առաջին եռամսյակում տեխնիկական ստուգումներ կատարել «Հարավ-Կովկասյան երկաթուղի» («ՀԿԵ») ՓԲԸ, «Վանաձոր քիմպրոմ» ՓԲԸ և «Շինարար» ՍՊԸ էներգատեղակայանքներում՝ համաձայն աղյուսակի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Աղյուսակ

| հ/հ | Ստուգման օրերը | Ստուգման օբյեկտը, պատկանելիությունը | Ստուգում իրականացնող մասնագետները | Ստուգաթերթը, հարցերը | Ստուգման ժամանակաշրջանը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հունվարի 23-25 | «Արաքս» 110/10 կՎ լարման քարշային ենթակայան «ՀԿԵ» ՓԲԸ | բաժնի պետ Բագրատ Միրզոյան<br>գլխավոր մասնագետ Գևորգ Մնացականյան | Ստուգաթերթ N 1, 1-45 հարցեր | 2014թ. հունվարից մինչև 2017թ. հունվար |
| 2 | Հունվարի 24-26 | «Պռոշյան» 110/10 կՎ լարման քարշային ենթակայան «ՀԿԵ» ՓԲԸ | բաժնի պետ Արսեն Դանիելյան<br>գլխավոր մասնագետ Արսեն Կարապետյան | Ստուգաթերթ N 1, 1-45 հարցեր | 2014թ. հունվարից մինչև 2017թ. հունվար |
| 3 | Փետրվարի 7-9 | «Երևան» 110/10կՎ լարման քարշային ենթակայան «ՀԿԵ» ՓԲԸ | բաժնի պետ Կորյուն Ուլիխանյան<br>գլխավոր մասնագետ Գագիկ Միքայելյան | Ստուգաթերթ N 1, 1-45 հարցեր | 2014թ. փետրվարից մինչև 2017թ. փետրվար |
| 4 | Փետրվարի 21-23 | «Վանաձոր քիմպրոմ ՋԷԿ» 110/6 կՎ լարման ենթակայան «Վանաձոր քիմպրոմ» ՓԲԸ | բաժնի պետ Արսեն Դանիելյան<br>գլխավոր մասնագետ Արամայիս Ուլիխանյան<br>գլխավոր մասնագետ Հայկ Ստեփանյան | Ստուգաթերթ N 1, 1-45 հարցեր | 2014թ. փետրվարից մինչև 2017թ. փետրվար |
| 5 | Փետրվարի 22-24 | «Շինարար» 110/6 կՎ լարման ենթակայան «Շինարար» ՍՊԸ | գլխավոր մասնագետ Սասուն Գույյան<br>գլխավոր մասնագետ Պատվական Հովհաննիսյան | Ստուգաթերթ N 1, 1-45 հարցեր | 2014թ. փետրվարից մինչև 2017թ. փետրվար |